ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագիրը շարունակելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Հանգուցյալ Գնել Ռուբիկի Հարությունյանին վարձակալությամբ տրված գյուղատնտեսական նշանակության վարելահողը առանց պայմանագրի պայմանների փոփոխության, ժառանգ Լիլիթ Աշոտի Դանիելյանին փոխանցելու որոշման նախագծի ընդունումը համայնքի բյուջեում ծախսերի նվազում կամ ավելացում չի ենթադրում:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագիրը շարունակելու մասին որոշման նախագիծ

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հողային օրենսգրքի պահանջներից:Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է համայնքային սեփականություն հանդիսացող՝ 07-012-0234-0019 ծածկագրով 1,8334 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը, որը 10 տարի ժամկետով վարձակալության է տրված Գնել Ռուբիկի Հարությունյանին, շարունակել նրա ժառանգ Լիլիթ Աշոտի Դանիելյանի հետ՝ առանց պայմանագրի պայմանների փոփոխության:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**